ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 1 ավագ դպրոց

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Փոխգործուն մեթոդները որպես մայրենիի դասագրքերի թեմատիկ խմբերի ամփոփման արդյունավետ միջոց

Կատարող՝ Շողիկ Սարգսյան Հրաչի
անուն ազգանուն, հայրանուն

Ղեկավար՝ Անահիտ Փարկիթյան
անուն ազգանուն

Գյումրի 2022

Բովանդակություն

Ներածություն…….…….3

1.Ուսուցման ժամանակակից մեթոդների ընդհանուր բնութագիր…….....5

2. Փոխգործուն մեթոդների կիրառումը որպես դասի արդյունավետությունը բարձրացնելու միջոց……..……12

3. Մայրենիի ուսուցման մեթոդիկայի առանձնահատկությունները……16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….....21

Օգտագործված գրականության ցանկ…….....24

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Աճող սերնդին բախտ է վիճակվել ապրել, ուսումնառել և աշխատել որակապես նոր տեղեկատվության պայմաններում, ճիշտ գնահատել իրականությունը, օգտվել ստեղծված հնարավորություններից: Ուսուցման գործընթացում իրենց կիրառությունն են գտնում արդի ժամանակաշրջանին բնորոշ ուսուցման նորագույն տեխնոլոգիաները՝ ինտերակտիվ գրատախտակները, տեխնիկական միջոցները:

Հետևաբար, **արդիական** է այն, որ վերջին տարիներին դանդաղ, բայց հաստատուն քայլերով ուսուցման գործընթաց են թափանցում փոխգործուն մեթոդները: Իսկ փոխգործուն մեթոդներով ուսուցումը հաճախ կապում են տեղեկատվական տեխնոլոգիաների, հեռավար կրթության, էլեկտրոնային դասագրքերի, օնլայն ռեժիմում աշխատանքային ձևերի հետ: Ուստի փոխգործուն մեթոդների օգտակարությունը հեռավար ուսուցման գործընթացում կարելի է ասել հիմնավորված է: Համաշխարհային մանկավարժական պրակտիկան հարուստ փորձ է կուտակել փոխգործուն մեթոդների տեսական մշակումների և գործնական կիրառությունների վերաբերյալ: Այսօր տարրական դպրոցում կիրառվում է փոխգործուն մեթոդների մեծ համախումբ, որն ապահովում է ուսուցման և ուսումնառության աշակերտակենտրոն մոտեցում, համաձայն որի՝ յուրաքանչյուր սովորող պետք է դառնա դասի գործուն մասնակիցը՝ ինքնուրույն անցնելով գիտելիքների ձեռք բերման ճանապարհը:

Աշխատանքի նպատակը: Ուսումնասիրել փոխգործուն մեթոդների կիրառման արդյունավետությունը կրտսեր դպրոցում՝ մայրենիի թեմատիկ խմբերի ամփոփման ժամանակ:

Ընտրելով թեման՝ <<Փոխգործուն մեթոդները որպես մայրենիի դասագրքերի թեմատիկ խմբերի ամփոփման արդյունավետ միջոց>>, հիմնավորել ենք աշխատանքի արդիականությունը, սահմանել ենք նպատակը և այն իրականացնելու համար առաջադրված խնդիրները:

Նպատակն իրականացնելու համար առաջադրել ենք խնդիրներ՝

- Ուսումնասիրել մասնագիտական գրականության՝ մեր թեմային առնչվող բաժինները,

- Ուսումնասիրել մայրենիի դասագրքերի թեմատիկ խմբերի ուսուցման և ամփոփման առանձնահատկությունները փոխգործուն մեթոդների միջոցով:

Հետազոտության ընթացքում կիրառել ենք գիտամեթոդական գրականության ուսումնասիության, վերլուծության, համեմատության, համադրման, դիտման, զրույցի, մաթեմատիկական-վիճակագրական մեթոդները:

1. Ուսուցման ժամանակակից մեթոդների ընդհանուր բնութագիրը

Ուսուցման մեթոդը բարդ և բազմակողմանի հասկացություն է: Մեթոդը հունարեն բառ է (metodos), որ բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ[1]: Մանկավարժության տեսության մեջ ընդունված են ուսուցման գործընթացի իրականացման մեթոդների բազմաթիվ տեսակներ, **մեթոդ եզրույթի** տարբեր բնորոշումներ: Օրինակ՝ ըստ Ի. Լերների՝ <<Ուսուցման մեթոդը ուսուցչի, աշակերտի իմացական և պրակտիկ գործունեությունը կազմակերպող հաջորդական գործողությունների համակարգ է, որը հանգեցնում է կրթության բովանդակության յուրացմանը, ասել է թե՝ ուսուցման նպատակների իրականացմանը>>[2]: Ըստ Ի. Խարլամովի՝ <<Ուսուցման մեթոդ ասելով՝ պետք է հասկանալ ուսումնասիրվող նյութի յուրացումն ապահովող, տարբեր դիդակտիկական խնդիրների լուծմանն ուղղված ուսուցչի ուսուցանող աշխատանքի և սովարողների ուսումնաճանաչողական գործունեության եղանակները>>:[3]

Ըստ պրոֆեսոր Ջուլիետա Գյուլամիրյանի առավել ընդունելի է Մ. Դանիլովի և Բ. Եսիպովի բնորոշումը, համաձայն որի՝ <<Ուսուցման մեթոդները ուսուցչի և նրա օգնությամբ աշակերտների աշխատանքի իրականացման եղանակներն են, որոնց շնորհիվ վերջիններս ձեռք են բերում գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, ձևավորում իրենց աշխարհայացքն ու զարգացման ճանաչողական ուժերը>>[4]:
Մանկավարժության մեջ մշակվել են ուսուցման մեթոդների զանազան դասակարգումներ: Այն դժվարին գործ է և պահանջում է հաշվի առնել ուսումնասիրվող առարկայի առանձնահատկությունները, սովորողների մտավոր մակարդակները, տարիքային փուլերը, դասարանի ուժեղ և թույլ կողմերը:

Ուսուցման մեթոդների դասակարգումը [5]



[1] ՀՀ ԿԳ Նախարարություն, Տարրական դասարանների Հայոց լեզու և մաթեմատիկա, Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր, Երևան 2007, էջ 106:
[2] Лернер И. Я. Дидактические основы методов обучения, М., 1981, с 34.
[3] Харламов И. Ф., Педагогика, Минск, 2004, с. 109.
[4] Ջ.Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2015, էջ 271:
[5] Ջ.Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան 2018, էջ 288:

- պատմում
- դասախոսություն
- բացատրություն
- էքսկուրսիա
- ցուցադրություն
- դիտարկում

- լաբորատոր
- գործնական
- աշխատանք գրքի շուրջ

Ըստ գիտելիքների ձեռքբերման աղբյուրի
Ն. Մ. Վերզալին, Ս. Ի. Պերովսկի, Ս. Մ. Լորդկիպանիձե

Պատմողական՝

- պատմում
- բացատրություն
- զրույց
- բանավեճ
- դասախոսություն
- աշխատանք գրքի շուրջ

Զննական՝

- դիտողական պարագաներ
- գծապատկեր
- գծապատկերներ
- նկարներ
- սարքավորումներ
- կինո, տեսաֆիլմեր և սահիկներ

Գործնական՝

- վարժություններ
- լաբորատոր աշխատանքներ
- գործնական աշխատանքներ
- փորձեր
- շարադրություններ
- աղյուսակներ
- սարքերի պատրաստում

Ըստ դիդակտիկ նպատակի՝
Մ. Ա. Դանիլով, Բ. Պ. Եսիպով

- նոր գիտելիքների ձեռքբերման մեթոդներ
- ունակությունների և հմտությունների ձևավորման մեթոդներ
- գիտելիքների կիրառման մեթոդներ
- գիտելիքների, ունակությունների, հմտությունների ամրապնդման և ստուգման մեթոդներ:

Ըստ ճանաչողական գործունեության բնույթի՝ Ի. Յա. Լերներ, Մ. Ն. Սկատին

- վերարտադրողական-բացատրական-ցուցադրական մեթոդներ
- պրոբլեմային շարադրման մեթոդ
- մասնակի-որոնողական /էվրիստիկ/ մեթոդ
- հետազոտական մեթոդ:

Ուսուցման մեթոդներն ըստ գիտելիքների աղբյուրի

Խոսքային մեթոդներ	Զննական մեթոդներ	Գործնական մեթոդներ
• պատմում • բացատրություն • զրույց /նախապատրաստական զրույց, մեկնողական,	• ցուցադրումներ /պաստառներ, քարտեզներ, աղյուսակներ • իրազննություն	• վարժություններ /բանավոր, գրավոր • գրաֆիկական գծապատկեր, քարտեզներ, պաստառներ,

ամրապնդող զրույց/, • բանավեճ • դասախոսություն • աշխատանք գրքի շուրջ՝ համառոտագրում, պլանի կազմում, մեջբերումներ, տեղեկանք:	/փորձեր, սարքեր, կինոֆիլմեր/:	էքսկուրսիաներ • ուսումնական աշխատանքներ /երբ ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառվում են աշխատանքային գործունեության մեջ/ • լաբորատոր աշխատանքներ:

Յուրաքանչյուր առարկայի դասավանդման մեթոդիկա հենվում է դիդակտիկայում մշակված ավանդական մեթոդների վրա, որոնք դասակարգվում են՝ հիմք ընդունելով դրանց իրականացման ժամանակ օգտագործվող միջոցները. Ուսուցման մեթոդներն ավանդաբար բաժանվում են 3 խմբի՝ **զննական, խոսքային և գործնական,** որոնք հիմնականում հանդես են գալիս փոխկապակցված:

Զննական մեթոդները տարրական դպրոցում հաճախակի են օգտագործվում, ընդ որում՝ կիրառվում են ավելի շատ դիտման մեթոդը և նրա տարատեսակները: Կարևորվում է մասնավորապես իրազննությունը (խաղալիքներ, նկարներ, լուսանկարների դիտում, առարկաների նկարագրում, դիդակտիկ խաղեր, նկարների շուրջ պատմումներ), որն օգտագործվում է գիտելիքների ամրակայման, բառապաշարի հարստացման, կապակցված խոսքի զարգացման նպատակներով:

Խոսքային մեթոդները տարրական դպրոցում նույնպես լայն կիրառություն ունեն. Գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցումն ու պատմումը, արձակ և չափածո ստեղծագործությունների անգիր անելը, զրույցները, բանավեճերը: Խոսքային բոլոր մեթոդների ժամանակ, անշուշտ, կարելի է օգտագործել նաև դիտողական պարագաներ: Խոսքային մեթոդների արդյունավետությունը մասնավորապես ակնառու է ներկայացումների դիտման, դրանց քննարկման, ներկայացման թեմաներով (կամ կինոնկարների, կարդացած ստեղծագործությունների) բանավեճերի, հանդիպումների և խոսքային բազմազան վարժանքների կատարման ժամանակ:

Գործնական մեթոդների կիրառումը նպաստում է սովորողների ձեռք բերած գիտելիքների կիրառմանը, խոսքային ունակությունների ու կարողությունների կիրառման կատարելագործմանը: Գործնական մեթոդների թվին են պատկանում

տարաբնույթ խոսքային վարժությունները, լեզվական խաղերը, խաղ-բեմականացումները, ուշագրավ թեմաներով հոգեբանամանկավարժական վարժանքները:

Տարրական դասարաններում կիրառելի են նաև վերարտադրողական և ստեղծագործական մեթոդները:

Վերարտադրողական մեթոդներից են նկարների դիտումները և դրանց բովանդակության քննարկումն ու վերարտադրումը, գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցումը և պատմումը, տարաբնույթ նյութերի անգիր սովորելը, գրական ստեղծագործությունների բովանդակության հիման վրա իրականացվող խաղ-բեմականացումները, դիդակտիկ խաղերը: Սրանց օգտագործման ժամանակ երեխաները խոսքային նմուշի հիման վրա յուրացնում են որոշակի բառապաշար, խոսքային կառույցներ, դարձվածքներ, ընդօրինակում են պատրաստի խոսքը և այլն:

Ստեղծագործական մեթոդները նպաստում են կապակցված խոսքային արտահայտություններ կառուցելու կարողության ձևավորմանը. աշակերտը ոչ թե վերարտադրում է իրեն հայտնի լեզվական միավորները, այլ ստեղծում նոր համակցումներ՝ առաջնորդվելով հաղորդակցման իրադրության պահանջներով, առանձնահատկություններով: Ստեղծագործական մեթոդներից են ամփոփիչ զրույցները, ընթերցածի ստեղծագործաբար վերարտադրումը, բնագրի ձևափոխված պատմումը, իրադրությունային խաղերն ու երկխոսությունները[6]:

ԽԻԿ համակարգ: Ժամանակակից կրթակարգի մեջ տեղ գտած բազմաթիվ մեթոդների մեջ իր անփոխարինելի տեղն ունի ԽԻԿ համակարգը, որը հստակորեն լուսաբանում է ողջ դասապրոցեսի անցկացման արդյունավետության աստիճանը:

ԽԻԿ համակարգը երեք փուլից կազմված ուսուցման կազմակերպման ռազմավարություն է: Այս համակարգով ուսուցման կազմակերպումը նպաստում է երեխայի քննադատական մտածողության, ինքնուրույն եզրահանգումներ անելու կարողության, ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Խ – խթանում

Ի – իմաստի ընկալում

[6] Ջ.Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2015, էջ 273:

Կ – կշռադատում

Խթանումը ԽԻԿ համակարգի առաջին փուլն է, որի նպատակն է քննարկման միջոցով վերհանել երեխաների ունեցած գիտելիքները նոր ներկայացվող նյութի մասին, այն կարելի է իրականացնել, օրինակ, մտագրոհի օգնությամբ:

Խթանման փուլը հետապնդում է հետևյալ նպատակները.

- բացահայտել երեխաների նոր նյութի վերաբերյալ ունեցած գիտելիքները,
- ակտիվացնել երեխաներին՝ ներգրավելով նրանց քննարկվելիք նյութի մեջ,
- երեխաների մեջ ձևավորել գիտտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում, շահագրգռածություն:

Իմաստի ընկալումը եռափուլ աստիճանի երկրորդ աստիճանն է: Այս փուլում հաղորդվում է նոր նյութը, տեղեկատվությունը կամ գաղափարը:

Իմաստի ընկալման փուլի նպատակներն են.

- երեխայի մոտ հետաքրքրության աճի պահպանումը
- տեղեկատվության ընկալման ապահովումը
- նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:

Կշռադատումը ԽԻԿ համակարգի երրորդ փուլն է, որի ժամանակ սովորեցնողի դերը նվազագույնն է: Այն հիմնականում կրում է ուղղորդող, հուշող կարգավորող բնույթ: Վերջինս օգնում է, որ երեխան ինքը հանրագումարի բերի իր գիտելիքները, իսկ նորը դարձնի իր սեփականությունը:

Կշռադատման փուլում իրականացվում են հետևյալ նպատակները.

- երեխան նոր ստացած տեղեկատվությունը արտահայտի իր բառերով և ձևակերպումներով
- երեխաների հետ ծավալել նոր նյութի վերաբերյալ քննարկում՝հնարավոր դարձնելով նույն գաղափարը ներկայացնել՝ այլ ձևակերպումներով ու մոտեցումներով
- նոր գիտելիքների մաձուլում և դրանց աստիճանական ինտեգրում

Կշռադատման փուլում ևս կարելի է կիրառել տարբեր փոխգործուն մեթոդներ[7]:

[7] https://kznaknaxadprocakan.blogspot.com/

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի խթանման փուլում՝ <<Մտագրոհ>>, <<Խորանարդում>>, Խմբավորում>>, <<Բանալի բառեր>>, <<Պրիզմա>>, <<Մտածիր, զույգ կազմիր, քննարկիր>>, <<ԳՈՒՍ /գիտեմ, ուզում եմ սովորել, սովորել եմ/>>, <<Դերային խաղ>>:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի իմաստավորման փուլում՝ <<Տ-աձև աղյուսակ>>, <<Վենի դիագրամ>>, <<Զրույց>>, <<Գաղափարների /հասկացությունների/ քարտեզագրում>>, <<Փոխգործուն նշանների համակարգ>>, <<Խճանկար>>, <<Բանավեճ>>, <<Շրջագայություն պատկերասրահում>>:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի կշռադատման փուլում՝ <<Քառաբաժան>>, <<Ձնագնդի>>, <<Գնահատման անիվ>>, <<Իրավիճակների վերլուծության մեթոդ>>, <<Ուղեղային/ մտային գրոհ կամ մտքերի տարափ>>, <<Հեղինակի աթոռ>>, <<10 րոպեանոց շարադրանք>>[8]:

Ուսուցման մեթոդների ընտրության ժամանակ շատ կարևոր է հաշվի առնել ուսուցման մեթոդների արդյունավետության գործոնը: Գիտական գրականության մեջ ուսուցման մեթոդների ազդեցությունն ուսումնառողների կողմից ուսումնական տեղեկատվության յուրացման վրա ներկայացված է աստիճանացույցի միջոցով.

Հոգեբանների կողմից ապացուցվել է, որ ուսուցման խոսքային մեթոդների կիրառության ժամանակ ուսումնառողների հիշողության մեջ պահպանվում է տեղեկատվության 5% -ը միայն: Գրքերի ընթերցումը հնարավորություն է ընձեռում հիշողության մեջ պահպանել տեղեկատվության 10% -ը, տեսաֆիլմերի, նկարների, դիտողական պարագաների դեպքում՝ տեսողականացված տեղեկատվության 20 %- ը: Արդյունավետ մեթոդներ են հանդիսանում գործնական և դերային խաղերը, ինչպես նաև նախագծման մեթոդը, որի արդյունքում ուսումնառողների մոտ պահպանվում է տեղեկատվության 75%-ը: Բայց առավել մեծ արդյունավետություն է ապահովում ուսումնագործնական պարապմունքների անցկացումը հենց ուսումնառողների կողմից, յուրացվում է տեղեկատվության 90%-ը[9]:

Ուսուցման մեթոդների արդյունավետության աստիճանացույց

---

[8] Ս. Սարուխանյան, Ա. Դալլաքյան, Ն. Դիշաղաջյան, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ք. Վանաձոր, 2008թ., էջ 98:

[9] Հայկ Պետրոսյան, Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան 2012, էջ 187-188:

5%–ն այն ամենի, ինչ լսել ենք	Պատմում
10%–ն այն ամենի, ինչ կարդացել ենք	Ընթերցանություն
20%–ն այն ամենի, ինչ տեսել ենք	Տեսանկարի դիտողական և այլ նյութերի դիտում
30%–ն այն ամենի, ինչ տեսել և լսել ենք	Ցուցադրություն
40%–ն այն ամենի, ինչ սովորել ենք միասին	Բանավեճ
50%–ն այն ամենի, ինչ կարդացել, հետազոտել, քննարկել ենք միասին	Վարժություններ
75%–ն այն ամենի, ինչ ինքնուրույն կարդացել, վերլուծել, գրել, քննարկել, պաշտպանել և ցուցադրել ենք միասին	Գործնական խաղ, նախագծերի մեթոդ
90%–ն այն ամենի, ինչ սովորեցրել ենք ուրիշներին	Ուսուցում՝ ուրիշներին

2 Փոխգործուն մեթոդների կիրառումը որպես դասի արդյունավետությունը բարձրացնելու միջոց

Մարկոս Ֆաբիոս Քվինթլիանոսի խոսքով՝ <<Երեխան ոչ թե դատարկ սափոր է, որը պետք է լցնել, այլ ջահ է, որը պետք է վառել>> միտքը դրված է ուսուցման փոխգործուն մեթոդների հիմքում[10]: Դարերի խորքից եկած այդ իմաստուն գաղափարը համապատասխանում է արդի մանկավարժական մոտեցումներին: Ժամանակակից մանկավարժության կարևոր խնդիրներից մեկը ուսուցման-ուսումնառության արդյունավետության բարձրացումն է: Այսօր ձևավորվել են մանկավարժական տարբեր մոտեցումներ, որոնք միտված են բարելավելու կրթության որակը:

Վերջին տարիներին դանդաղ, բայց հաստատուն քայլերով ուսուցման գործընթաց են թափանցում փոխգործուն մեթոդները: Փոխգործուն մեթոդներով ուսուցումը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ընթացքում մասնակցելու ողջ դասարանին, ուսուցչի կողմից չի մատուցվում պատրաստի գիտելիքները, այլ հնարավորություն է տրվում աշակերտներին ակտիվացնել իրենց գիտելիքները, հիշողությունը, ինչպես նաև պրակտիկ գործունեության ընթացքում ձեռք բերել նորանոր գիտելիքներ և հմտություններ[11]:

Փոխգործուն մեթոդները նպաստում են աշակերտների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացը հետաքրքիր և աշխույժ դարձնելու պայմանների ստեղծմանը: Մեթոդներն ուսուցմանը հաղորդում են ստեղծագործական-հետազոտական բնույթ, իհարկե, այս մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում, այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն փոխգործուն մեթոդներով: Հարկ է նշել, որ փոխգործուն մեթոդները խարսխվում են ավանդական մեթոդներին և դրանք դարձնում ավելի ճկուն, ապահովում ուսուցման համագործակցության սկզբունքի արդյունավետությունը:

[10] Նախաշավիղ 1. 2016, Հ. Նազարյան էջ 15:
[11] Նախաշավիղ 5-6. 2003, Ս. Խաչատրյան էջ 14:

Փոխգործուն տեխնոլոգիաները և մեթոդները բազմազան են՝ աշխատանք փոքր խմբերում՝ զույգերով, կարուսելի, էվրիստիկական զրույցի, դաս-սեմինարների (մտքերի փոխանակություն, բանավեճ), գործարար խաղերի, համագործակցային, մոդելավորման տեխնոլոգիաների կամ նախագծերի մեթոդ և այլ[12]:

Սկզբնական շրջանում փոխգործուն մեթոդների կիրառումը որոշակի դժվարություն էր առաջացնում և՛ ուսուցիչների, և՛ աշակերտների համար: Իսկ այժմ ուսուցիչների ուղղորդմամբ կատարվող աշխատանքները տվել են իրենց արդյունքը. երեխաներն արդեն կարողանում են ինքնուրույն մտքեր արտահայտել, խելացի առաջարկություններ, կարծիքներ, նոր գաղափարներ առաջադրել: Երեխաներն ավելի ինքնուրույն ու համարձակ են դարձել, վերացել է սխալվելու նրանց վախը: Այս մեթոդը դասավանդման ավանդական ձևերից առավել գերադասելի է և հազվադեպ է զիջում դասավանդման այլ տեսակներին:

Ուսուցչակենտրոն մեթոդով վարվող դասերի ընթացքում ուսուցիչներն աշխատում են հիմնականում ամբողջ դասարանի հետ, կամ էլ ուսումնասիրվող թեմայի, նյութի բովանդակության որևէ հատվածը յուրացնելու համար աշակերտներն անհատական աշխատանք են կատարում: Այդ դասերի նպատակն ու կառուցվածքը հիմնված են անհատական մրցակցության և ջանքերի վրա: Մինչդեռ փոխգործուն մեթոդների կիրառման դեպքում աշակերտներին խրախուսում և նրանցից պահանջում են միասին աշխատել որևէ ընդհանուր առաջադրանքի վրա: Երբ աշակերտները պատասխանատվություն են ստանձնում իրենց ուսումնառության համար, նրանք ավելի լավ են սովորում: Սովորելը նրանց համար դառնում է ինքնադրսևորման միջոց: Սա արդեն խթան է, որ նրանք լավ սովորեն:

Փոխգործուն մեթոդների կիրառմամբ դասերի պլանները կազմելիս պետք է առաջնորդվել աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներով, որոնք ենթադրում են ուսումնառության ընթացքում աշակերտների հնարավորինս մեծ ակտիվության ապահովում և ուսուցչի աջակից, խորհրդատու դերի հաստատում: Այդ իսկ պատճառով համառոտ ներկայացնենք փոխգործուն մեթոդի գործադրման քայլերը: Ուսուցիչն առաջադրում է քննարկվող հարցը: Նա ոչ թե ուսումնական նյութ է հաղորդում, այլ մեկնաբանում է հարցադրումը:

[12] Նախաշավիղ 7-8.2001, Ջ. Գյուլամիրյան, էջ 21:

- Ոչ մեկը չի կաշկանդվում՝ մտածելով, որ ինքը կարող է սխալվել:
- Դիմացինի կարծիքը չի մերժվելու ոչ մեկի կողմից:
- Ցանկացած կարծիք խրախուսվում է:

Փոխգործուն մեթոդի կիրառումն ուսուցիչներին հնարավորություն է տալիս.

- Ակտիվացնել աշակերտների մտածողությունը
- Հետաքրքիր քննարկումներ ծավալել
- Աշակերտներին ակտիվորեն ներգրավել ուսման գործընթացի մեջ
- Նպաստել դրական փոփոխությունների ձևավորմանը
- Աշակերտներին հնարավորություն տալ ծանոթանալու տարբեր կարծիքների հետ
- Խրախուսել աշակերտների ինքնարտահայտումը
- Ապահովել տեղեկատվության մշակումը:

Փոխգործուն մեթոդի անհրաժեշտությունն ակնառու է խմբային աշխատանքի կիրառման ժամանակ: Այն աշխատանքային մի ձև է, որն ուսուցումը դարձնում է հայտնագործություններ կատարելու գործընթաց: Խմբի բոլոր աշակերտները պատասխանատու են աշխատանքի իրենց բաժինը կատարելու և նյութը յուրացնելու համար: Անհատապես հաշվետու լինելն սկսվում է, երբ յուրաքանչյուրի կատարած աշխատանքը գնահատվում է, և խումբը տեղյակ է լինում այդ մասին, որպեսզի պարզ լինի՝ ով լրացուցիչ օգնության կարիք ունի իր աշխատանքի ընթացքում: Թիմի անդամներն ըմբռնում են, որ իրենք միմյանց հետ կապված են այնպես, որ թիմը չի կարող հաջողության հասնել, եթե յուրաքանչյուրն իր հերթին հաջողություն չունենա: Խմբային աշխատանքի մի մասը կարելի է առանձնացնել և կատարել անհատապես, սակայն մեծ մասը պահանջում է փոխգործուն աշխատանք, ընդ որում, խմբի անդամները մշտապես արձագանքում են միմյանց: Բացի ակադեմիական հմտություններ հաղորդելուց, աշակերտներին օգնում և քաջալերում են յուրացնել և զարգացնել հասարակական այնպիսի կարևոր ունակություններ, ինչպիսիք են վստահության զգացումը, լիդերությունը, որոշումներ կայացնելու, հաղորդակցության, կոնֆլիկտի կառավարման կարողությունները[13]:

[13] Ս. Խաչատրյան, Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դասարաններում, Գյումրի 2006, էջ 34:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ փոխգործուն մեթոդներով սովորած աշակերտները դրսևորում են բարձրակարգ մտածողություն, նյութի ավելի խոր ընկալում, սթրեսի և տագնապի ավելի ցածր մակարդակ, սովորելու և հաջողության հասնելու ուժեղ մղում, իրավիճակն ուրիշների տեսանկյունից դիտարկելու նուրբ ունակություն, ընկերների հետ ընկերական և աջակցային հարաբերություններ հաստատելու պատրաստակամություն, ավելի լուրջ վերաբերմունք ուսումնառության գործընթացին: Ուսուցումը փաստերի և գիտելիքների պարզ մտապահումից և վերարտադրումի վերափոխվում է նպատակաուղղված, բովանդակալից գործունեության: Հավաքելով տվյայները, վերլուծելով ուսումնական խնդիրը, ընդունելով այլընտրանքային տեսակետներ և օգտագործելով խմբային քննարկման ընթացքում հնչած տեսակետները աշակերտները փնտրում և գտնում են իրենց հուզող հարցերի պատասխանները: Ուսուցչի և աշակերտների ճիշտ ու նպատակային կազմակերպված հարցադրումներն անմիջականորեն նպաստում են խոսքի և մտքի զարգացմանը:

Այսպիսով, ուսուցումը փաստերի և գիտելիքների պարզ մտապահումից և վերարտադրումից վերափոխվում է նպատակաուղղված, բովանդակալից գործունեության: Ելնելով սրանից՝ կարող ենք պնդել, որ փոխգործուն մեթոդները հեշտությամբ կարող ենք համապատասխանեցնել մայրենիի դասընթացին: Փոխգործուն մեթոդների կիրառումը կբարձրացնի դասի արդյունավետությունը, սովորողների ակտիվության մակարդակը, հնարավորություն կտա հաշվի առնելու սովորողների անհատական առանձնահատկությունները և կազմակերպելու շերտավորված ուսուցում՝ չափորոշչային պահանջներին համապատասխան[14]:

[14] Ս. Խաչատրյան, Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դասարաններում, Գյումրի 2006, էջ 35:

3. ՄԱՅՐԵՆԻԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դասը ուսումնական գործընթացի բաղկացուցիչ տարրն է: Ուսուցչի և աշակերտների ուսումնական գործունեությունը հիմնականում կենտրոնանում է դասի վրա: Դրա համար էլ մեծ մասամբ աշակերտի պատրաստվածությունը այս կամ այն առարկայից որոշվում է դասի անցկացման մակարդակով: Որպեսզի այդ մակարդակը լինի բավարար չափով բարձր, անհրաժեշտ է, որ ուսուցիչը դասին նախապատրաստվելիս աշխատի այն պլանավորել իբրև իր հարուստ մտահղացումներով մի ինքնատիպ ստեղծագործություն՝ յուրահատուկ նախաբանով, հանգույցով և լուծումներով, ինչպես բնորոշ է ցանկացած գեղարվեստական ստեղծագործության[15]:

Դասավանդումն ուսուցչի փորձի և գործնական աշխատանքի ընթացքում կուտակած իմաստության զուգակցման արվեստն է: Ուսուցչից պահանջվում է լավագույն մեթոդների օգնությամբ աշակերտներին զինել տարրական հմտություններով ու գիտելիքներով: Այլևս բավարար չէ երեխաների նկատմամբ ուսուցչի ջերմ ու սիրառատ վերաբերմունքը, ոչ էլ սոսկ ըմբռնման, անձնական նախընտրության կամ ավանդական մտածելակերպի հիման վրա դասավանդման որևէ մեթոդի կիրառման հիմնավորումը: Ժամանակակից ուսուցիչները պետք է կիրառեն դասավանդման այնպիսի մեթոդներ, որոնց արդյունավետության մեջ համոզվել են գործնականում: Խիստ կարևոր է, որ ուսումնառության ընթացքում բոլոր ուսուցիչներն օգնեն աշակերտներին, սակայն այդ օգնությունը չպետք է դառնա միանձնյա ղեկավարում կամ սոսկ վերահսկում[16]:

Ժամանակակից մանկավարժական նոր մոտեցումների հիմքում դրվում են դասավանդման աշակերտակենտրոն, փոխգործուն, համագործակցային համակարգեր: Դպրոցական ծրագրերի ոչ մի առարկա այնքան հարցեր չի առաջացնում, որքան մայրենին, ի՛նչ դասավանդել, ի՛նչ ծավալով, ինչ նպատակներ դնել ուսուցչի և աշակերտի առջև, ինչպե՞ս հետաքրքրություն սերմանել մայրենիի

---

[15] Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Ա. Բալայան, Ինչպես պլանավորել մայրենիի դասը 2-րդ դասարան, Զանգակ, Երևան2020, էջ 5:

[16] Ս. Վարդումյան և ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ, Երևան, Այրեքս, 2005, էջ 174:

ուսումնասիրության նկատմամբ, ինչպես գրագետ դարձնել երեխային, որ նա կարողանա ճիշտ արտահայտել իր մտքերը թե՛ բանավոր, թե՛ գրավոր:

Ուսուցման մասին խոսելիս անհրաժեշտ է հաշվի առնել հայեցակարգային մի շարք հարցեր

- Ինչ սովորեցնել,
- Ինչպես սովորեցնել,
- Երբ սովորեցնել,
- Ինչու հենց այդ ժամանակ, հենց այդպես և ոչ մեկ այլ կերպ սովորեցնել:[17]

Ինչ սովորեցնել խնդրի պատասխանը մայրենիի ուսուցման բովանդակությունն է, որը որոշվում է պետության կողմից հաստատված ծրագրով և դրա հիման վրա ստեղծված դասագրքերով:

Ինչպես սովորեցնել խնդիրը լուծելու համար դիտարկվում են ինչպես մանկավարժության մեջ ընդունված ուսուցման ընդհանուր՝ ավանդական մեթոդները, եղանակները, հնարները, վարժությունների համակարգերը, որոնց հիման վրա մշակված են այդ մեթոդների կիրառման ուղիներ, այնպես էլ ժամանակակից մեթոդական այն հնարները, մոտեցումները, որոնք այսօր մտել են դպրոց և հաջողությամբ կիրառվում են ուսումնական գործընթացում:

Ինչպե՞ս սովորեցնել խնդիրը արդյունավետ լուծելու համար չափազանց կարևոր է հաշվի առնել սովորողների՝ աշակերտական նպատակները: <<Ուսուցման մեթոդն իր ընդհանուր դիդակտիկական նշանակությամբ սովորեցնողի ու սովորողի համագործակցության մոդելն է, որի գլխավոր բաղադրիչներն են՝ սովորեցնողի նպատակը, նրա գործունեությունը, այդ գործունեության միջոցները, սովորողի նպատակը, որը համընկնում է սովորեցնողի նպատակին, աշակերտի գործունեության միջոցները, յուրացվելիք օբյեկտի հետ համագործակցության ազդեցության շնորհիվ աշակերտի անձնային փոփոխություններն ու նպատակին հասնելը>>:

Երբ սովորեցնելու խնդիրը ևս կարևոր է: Այն առաջին հերթին պայմանավորած է սովորողների տարիքային առանձնահատկություններով: Հիշողության, ընկալման, ուշադրության, մտածողության, երևակայության, զգացմունքների, կամքի

[17] Ջ.Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2018, էջ 5:

զարգացման մակարդակների բնութագրիչները կարևոր դեր ունեն ուսումնական նյութի՝ ըստ տարիքային փուլերի բաշխման գործընթացում:

Ինչու այդպես և ոչ մեկ այլ կերպ սովորեցնելը կարևորվում է, որովհետև ուսուցման գործընթացում յուրաքանչյուր մանկավարժ պետք է գիտակցորեն կատարի իր քայլերը՝ համոզված, որ ինքը ճիշտ ուղու վրա է: Ենթադրվում է, որ դրա համար նա ոչ միայն պետք է քաջատեղյակ լինի առարկայի դասավանդման մեթոդիկայի բոլոր նրբություններին, այլև համեմատի, հակադրի այն մեթոդները, որոնք առաջադրվում են իրեն, կամ ինքն է ընտրում իր համար, հասկանա իր կատարած յուրաքանչյուր քայլի նպատակահարմարությունը և համոզված լինի իր յուրաքանչյուր քայլի արդյունավետության, դրա գիտականորեն հիմնավորվածության մեջ: Այդ հիմնավորվածությունն ուսուցչին վստահություն է ներշնչում և համոզմունք է ձևավորում իր գործողությունների ճշմարտացիության հարցում, և եթե ինչ-որ բան չի ստացվում, պետք է գնալ դեպի սեփական աշխատանքը, դեպի ընտրված մեթոդներն ու միջոցները ու մտածել. <<Արդյոք ամեն ինչ էր ճիշտ արված>>[18]:

<<Տարրական դպրոցի հիմնական նպատակը սովորողի մտավոր, հոգևոր, և ֆիզիկական կարողությունների լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումն է: Տարրական դպրոցն ապահովում է ուսումնառության անհրաժեշտ պայմաններ և միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող մակարդակ>>[19]:

Տարրական դպրոցում մայրենիի ուսումնասիրությունն իրականացվում է գործնականորեն և ունի գրավոր ու բանավոր գրագետ խոսք կառուցելու, հասկանալով կարդալու և այն այլ առարկաներից գիտելիքներ ձեռք բերելու համար երեխաների կողմից որպես բանալի օգտագործելու նկրտում: Չնայած մայրենիի ուսումնասիրման գործնական բնույթին՝ տարրական դասարաններում լեզվական գիտելիքների յուրացումը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով առարկայի առանձնահատկությունները: Օրինակ՝ հայոց լեզվի քերականության ուսումնասիրման ժամանակ առարկայի առանձնահատկությունները պահանջում են

[18] Ջ.Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2018, էջ 6:
[19] Հանրակրթության պետական կրթակարգ, Ե., Անտարես, 2004, էջ 9:

նաև քերականական որոշ իրողությունների մասին մատչելի տեսական գիտելիքների յուրացում[20]:

Մայրենիի տարրական դասընթացի խնդիրը կրտսեր դպրոցականների լեզվամտածողության և տրամաբանության, մտածելակերպի, ուսումնառության և համագործակցային տարրական կարողությունների, պարզ ունակությունների ձևավորումն է, ազգային և համամարդկային արժեքների ձեռքբերումը: Այսպիսով, մայրենիի տարրական դասընթացի ուսումնասիրման գործընթացը ենթադրում է երեք փոխշաղկապված խնդիրների լուծում՝

1. ուսումնական
2. դաստիարակչական
3. զարգացնող:

Սրանց միասնության շնորհիվ լուծվում են կրտսեր դպրոցականների անձի բազմակողմանի զարգացման, ազգային և համամարդկային արժեքների ձեռքբերման, հայեցի հոգեկերտվածքի ձևավորման խնդիրները[21]:

Մայրենիի տարրական դասընթացի ուսումնասիրումն իրականացվում է հիմնականում ճանաչողական-կիրառական արժեք ունեցող նյութերի, գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցման ճանապարհով: Ցանկացած հնարավորության դեպքում անհրաժեշտ է դասարան բերել մանկական գրքեր և երեխաների ուշադրությունը սևեռել դրանց վրա: Դրանք կարող են լինել ուսումնասիրվող ստեղծագործության գրքեր կամ միևնույն հեղինակի այլ ստեղծագործություններ, ինչպես նաև թեմային վերաբերող գրքեր այլ հեղինակներից: Ուսուցման գործընթացում ներառելով հերթական գիրքը, անհրաժեշտ է աշակերտների հետ քննարկել՝ ինչով է պայմանավորված այդ գրքի ընտրությունը և ինչ լրացուցիչ հնարավորություններ է այն ստեղծում (նկարներ, հեղինակի դիմանկար): Անխոս, այս միջոցները կխթանեն ընթերցասիրությունը և կօգնեն մանկական գրքերի հետ առավել ակտիվ աշխատելու հարցերում:

[20] Ջ.Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան 2018, էջ 7:
[21] Նույն տեղում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարրական դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացում մեծ դեր ունեն ժամանակակից ուսուցման ձևերը, որոնք նպաստում են սովորողների մտավոր ունակությունների ակտիվացմանն ու զարգացմանը: Կրթական գործընթացի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությամբ: Վերջին տարիներին հաճախ են հակադրվում ուսուցման ավանդական և փոխգործուն մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ փոխգործուն և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Սակայն այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար, բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարներն ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Ուսումնասիրելով գիտամեթոդական գրականությունը, իրականացնելով հետազոտական աշխատանքները՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- Ուսուցման փոխգործուն մեթոդները ուսուցումը դարձնում են խիստ յուրօրինակ ու առանձնահատուկ և այդ առանձնահատկությունն առավել ակնհայտ արտացոլվում է տարրական դասարաններում:
- Փոխգործուն մեթոդների կիրառումը ավանդական մեթոդների համադրմամբ կարող է արդյունավետորեն նպաստել դասագործընթացում աշակերտների ակտիվ մասնակցությանը և ներգրավվածությանը:
- Ուսուցման փոխգործուն մեթոդները նպաստում են, որպեսզի աշակերտները բովանդակության պասիվ ընկալողներից դառնան գաղափարների ակտիվ կառուցողներ: Այն նաև հնարավորություն է

տալիս աշակերտներին փոխազդելու միմյանց վրա, ինչը ավելացնում է սովորելու շարժառիթները և աշակերտների ակտիվ ներգրավվածությունը:

- Փոխգործուն մեթոդների կիրառումը օգնում է աշակերտներին գնահատել սեփական ուսումնառությունը, գործի դնել անձնական նպատակները, ընտրել ամենաարդյունավետ գործողությունները և գնահատել իրենց հաջողությունները, որոնք ընդունակ են սովորել ողջ կյանքի ընթացքում, դրդում են աշակերտներին առավել հանգամանորեն մտածել նյութի մասին, իմաստային կապեր հաստատել և եզրակացություններ անել: Իսկ խմբային աշխատանքի ժամանակ ուսուցումը դարձնում է հայտնագործություններ կատարելու գործընթաց:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում նկատեցինք, որ մայրենիի դասագրքերի թեմատիկ խմբերի ամփոփումը առավել հետաքրքրական է և արդյունավետ իրականացնել փոխգործուն մեթոդական հնարներով: Մեկ ամփոփող դասի ժամանակ կարելի է կիրառել մի քանի փոխգործուն մեթոդական հնար: Օրինակ՝ <<Վենի գծապատկերը>>, <<Քառաբաժանը>>, <<Մտագրոհը>> կարելի է կիրառել թեմատիկ խմբի ստեղծագործությունների տարբեր խնդիրների, ձեռքբերումների ամփոփման նպատակով:

Հետազոտական աշխատանքի ժամանակ մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ փոխգոծուն մեթոդները ներկայիս տարրական դպրոցի աշակերտակենտրոն ուսուցման նախապայմաններից է՝ ստեղծելով կրտսեր դպրոցականների համար ուսումնական ակտիվ միջավայր, իր ազդեցությունն է թողնում աշակերտների հաղորդակցման կարողությունների զարգացման վրա: Ավանդական մեթոդների կողքին փոխգործուն մեթոդների այսպիսի նպատակայնությունն ապացույց է այն բանի, որ ուսուցման գործընթացը հետաքրքիր ու արդյունավետ է նոր մոտեցումներով:

- Ցանկալի է մանկավարժական առաջավոր փորձի փոխանակման, հարստացման, ինչպես նաև մեթոդական գիտելիքների մշտական համալրման նպատակով ստեղծել տարրական դասարաններում մայրենիի դասավանդման մեթոդների հարստացման առցանց հարթակ, որտեղ ուսուցիչները կտեղադրեն իրենց վարած դասերի օրինակելի նմուշները, կկատարեն վերլուծություններ, կքննարկեն իրենց հուզող հարցերը: Արդյունքում կստեղծվի մեթոդական պաշարների հարուստ շտեմարան, որը կարող է օգտակար լինել բոլոր ուսուցիչների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

1. Ա. Ե. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 562:
2. Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 1980թ:
3. Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Զանգակ հրատարակչություն, Երևան 2015:
4. Ա. Քյուրքչյան, Դ. Գյուրջինյան, Լ. Տեր-Գրիգորյան, Ն. Հեքեքյան, Մայրենի, Ուսուցչի ձեռնարկ 2-4, Երևան 2007:
5. Դավիթ Գյուրջինյան, Թամար Ալեքսանյան, Աշոտ Գալստյան, Մայրենի, Ուսուցչի ձեռնարկ 5-6, Երևան 2011:
6. Лернер И. Я. Дидактические основы методов обучения, М., 1981, с 34.
7. Харламов И. Ф., Педагогика, Минск, 2004, с. 109.
8. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Ա. Բալայան, Ինչպես պլանավորել մայրենիի դասը 2, Զանգակ հրատարակչություն, Երևան 2016:
9. Կ.Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Ա. Բալայան, Ինչպես պլանավորել մայրենիի դասը 3, Զանգակ հրատարակչություն, Երևան 2017:
10. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Ա. Բալայան, Ինչպես պլանավորել մայրենիի դասը 4, Զանգակ հրատարակչություն, Երևան 2018:
11. Կարինե Թորոսյան, Վաչագան Ա. Սարգսյան, Հեղինե Խաչատրյան, Մայրենի, Ուսուցչի ձեռնարկ 2-4, Երևան 2013:
12. <<Մխիթար Գոշ>> գիտամեթոդական հոդվածներ, 2019\N1:
13. Հայոց լեզու և գրականություն գիտամեթոդական հանդես, 1.2016:
14. Մայրենի-2, Վ.Ա. Սարգսյան, Սուսաննա Գրիգորյան, Կարինե Թորոսյան, Հեղինե Խաչատրյան, Երևան 2017:
15. Մայրենի-3, Վ.Ա. Սարգսյան, Հեղինե Խաչատրյան, Կարինե Թորոսյան, Ելենա Ջիլավյան, Երևան 2020:
16. Մայրենի-4, Կարինե Թորոսյան, Հեղինե Խաչատրյան, Վ.Ա. Սարգսյան, Կարինե Չիբուխչյան, Երևան 2018:
17. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, 1.2016:

18. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, 1.2002:
19. ՀՀ ԿԳ Նախարարություն, Տարրական դասարանների Հայոց լեզու և մաթեմատիկա, Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր, Երևան 2007:
20. Հայկ Պետրոսյան, Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան 2012թ, էջ 147:
21. Ս. Գ. Խաչատրյան, Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դասարաններում, Գյումրի 2006: